ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ
300-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ 300-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ

2000 թ. նոյեմբերի 22–24-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Մխիթարյան միաբանության 300-ամյա հոբելյանին և Վենետիկի ու Վիեննայի կենտրոնների միավորմանը նվիրված «Մխիթարյանների դերը հայ հոգևոր-մշակութային վերածննդի գործում» վերնագրով գիտաժողով: Գիտաժողովի բացմանը ներկա էին ՀՀ պաշտոնատար անձինք, հայ առաքելական եկեղեցու սպասավորներ. Հռոմի պապի դեսպանը Հայաստանում, Մխիթարյան միաբանության, Հայաստանի գիտության և մշակույթի գործիչներ: ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի ողջույնի ուղերձն ընթերցեց նրա խորհրդական Ռազմիկ Դավոյանը, ողջույնի խոսքով հանդես եկան Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն, ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆադեյ Մարգսյանը, Մխիթարյան միաբանության աբբահայր Հ. Եղիա վրդ. Քիլաղպյանը:

Ստորև տպագրում ենք ուղերձն ու ողջույնի խոսքերը, ինչպես նաև նստաշրջանում հանդես եկած Հ. Վարդան եպս. Աշքարյանի, Հ. Հարությունվրդ. Պզտիկյանի և Հ. Մերոբ Չամուրյանի զեկուցումները:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՂՋՈՒՅՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ՎԵՆԵՏԻԿԻ ԵՎ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆԸ

Ջերմորեն ողջունում եմ Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանությանը վերամիավորման կապակցությամբ և շնորհավորում հիմնարկության տարեգարձը:

Արդեն երեք դար շարունակվող ազգանվեր գործունեության առաջին իսկ օրվանից Մխիթարյանները եղել են հայ կրթության, գիտության և մշակույթի անխոնջ նվիրյալներ: Հայրենիքի համար թանկ են այս ասպարեզներում Մխիթարյանների արձանագրած բացառիկ նվաճումները, որոնք հայ իրականության և պատմության անբաժանելի մասն են:

Ողջունում եմ նաև այն ոգևորությունը, որով վերամիավորված Մխիթարյանները կրկնապատկված եռանդով և նորոգված ուխտով պիտի շարունակեն իրենց 300-ամյա լուսավոր ծառայությունը հանուն ազգային և համամարդկային մեր արժեքների պահպանման, զարգացման և հարստացման:

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ
Հայաստանի Հանրապետության
Նախագահ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Բ-Ի ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Հարգելի Նախագահ Ազգային Ակադեմիայի
Սիրելի ներկաներ

Մեծ ուրախություն է Մեզ համար՝ որպես Ամենայն Հայոց Հայրապետ, Գիտությունների Ազգային Ակադեմիայում ներկա գտնվել վաստակաբեռն կյանքի 300-ամյա իր հոբելյանը տոնող Մխիթարյան միաբանությանը նվիրված գիտաժողովի բացմանը: Համայն մեր ժողովրդի հետ Մեր հոգին բերկրանք է ապրում, որ այսօր, անկախ մեր Հայրենիքի խաղաղ երկնքի ներքո հայոց գիտության կաճառում հնչելու են մեծագործ հայորդյաց նվիրական ու թանկ բազում անուններ, որոնց առջև երախտագետ մեր ժողովուրդը գլուխ է խոնարհում և հիշելու է սերնդե-սերունդ:

Հավատքի և նրանից բխած անմնացորդ նվիրումի վրա է խարսխված հայոց հոգևոր կյանքն ու մշակույթը: Մեր տաճարների որմերին ու ձեռագիր ավետարանների գեղահյուս խորաններին դրոշմված են հայ վարպետների ու ծաղկողների «Հաւատքով կանգնեցաւ» խոսքերը:

Արգարև, հավատքով կանգուն է Մխիթարյան միաբանությունը: Իր մեծագործ հիմնադրի՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու վարդապետ Մխիթար Սեբաստացու հավատն ու նվիրումը Ս. Ղազարում 300-ամյա ստեղծարար կյանք գարձավ՝ պսակելով հայ մշակույթի աստղազարդ երկնակամարը պայծառաշուք համաստեղությամբ:

Պատմական հիշատակներով ու հրաշագործ զորությամբ հանրահայտ Սեբաստիո Առրբ Նշան վանքից էր Մխիթար վարդապետը: Սեբաստիայի Հողդար թաղամասում ծնված պատանին դեռևս 9 տարեկանում դպիր ձեռնադրվելով, 15 տարեկանում վանք է մտնում, ուր ձեռնադրությամբ վերանվանվում Մխիթար: Նրա կյանքում բախտորոշ եղավ հանդիպումը Ս. Էջմիածնի Միքայել արքեպիսկոպոսի հետ, որը հռչակված էր իր իմացությամբ ու ճգնակեցությամբ: Ուսուցիչ և աշակերտ վանքից վանք անցնելով, հասնում են Սևանի մենաստան:

Մխիթարի երազանքն էր հայոց վանքերի օրինակով նոր միաբանություն ստեղծել, սակայն դժնդակ ժամանակները անհնարին էին դարձնում նրա ծրագրի իրականացումը Հայաստանում: Քաջ գիտակցելով իրողությունը, ծանր ապրումների մեջ Մխիթարը կորցնում է տեսողությունը, բայց ոչ հավատը: 1692 թ. այդ հավատով բազկատարած խոնարհվելով Սևանա վանքի Տիրամոր պատկերի առջև և դիմելով Ամենասրբուհի Կույսի բարեխոսությանը, լսում է Տիրամոր «Եղիցին»: Հետագա ողջ կյանքում Մխիթար Սեբաստացին իր հոգում միշտ անմար պահեց Սևանա վանքում հնչած «Եղիցին»:

Այդ եղիցիով ստեղծվեց ու եղև Մխիթարյանների հսկայածավալ գիտադրական ժառանգությունը: Հիրավի, ահռելի է այդ վաստակը գիտության, մասնավորաբար հայագիտության բնագավառում, ինչպես նաև՝ հայ տպագրության և թարգմանական գրականության զարգացման գործում: Այն մեծ ու նշանակալի է ոչ միայն գիտական առումով, այլև ներծծված է հարազատ հայ ժողովրդի և մայր Հայրենիքի հանգեպ մխի-

թարյան հայրերի ունեցած սիրով, նվիրումով ու մտահոգությամբ: Նրանց մանրակրկիտ ուսումնասիրություններում Հայաստանը տեսանելի է հուշարձանն առ հուշարձան, բնակավայր առ բնակավայր, հայ ժողովուրդը ներկա է իր հարուստ պատմության մանրամասներով, բանահյուսությամբ, ազգագրությամբ, արքայական գրաբարով: Մենք գնահատանքով ցանկանում ենք արձանագրել, որ Մխիթարյանները մեծապես արժևորել են Հայ Առաքելական մեր սուրբ Եկեղեցու դերակատարությունը հայության կյանքում և ներդրում ունեն նաև Հայ Եկեղեցու ժառանգության մատուցման և պահպանման մեջ:

Ի նշան առ Ա. Էջմիածինն ունեցած իրենց հարգանքի ու խոնարհության, սկսած Մխիթար Սեբաստացուց, Մխիթարյանները ողջ XVIII դարում իրենց տպագրած գրքերի տիտղոսաթերթերին նշում էին ժամանակի Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունը, իսկ Եվրոպայում ընդունված Քրիստոնեական թվականի կողքին՝ Հայաստանյայց Եկեղեցում ընդունված հայոց թվականը:

Խորհրդանշական մեծ իմաստ ունեն երբեմն պարզ զուգադիպությունները, ինչպես Խրիմյան Հայրիկի ու Ղևոնդ Ալիշանի պարագայում, որ ծնվել են միևնույն՝ 1820 թ. և համընթաց անցել ութ տասնամյակների վաստակյալ ճանապարհ: Ժողովուրդը Խրիմյանին անվանեց Հայոց Հայրիկ, իսկ Հայր Ալիշանին՝ Հայոց Նահապետ, հոգևոր կամուրջ կապելով Ս. Էջմիածնից մինչև Ս. Ղազար և 1901 թ. տոնախմբելով իր խնկելի մեծերի ծննդյան 80-ամյա տարեդարձերը: Այդ օրերին Վենետիկում հիշվում էր Ս Էջմիածինը, իսկ Մայր Աթոռում՝ Ս. Ղազարը: Արդեն դողդոջուն Նահապետը հիշելով մշտառույգ Խրիմյանին, ասում է. «Ան Մասսի հովին տակ կքնանայ, Արաքսի ջուրը կխմե, Հայաստանի հացը կուտե, անոր հողի ուժը կառնե»: Հայոց Նահապետին նոր ուժ ու զորություն պարգևելու համար Հայոց Հայրիկը պատվիրում է «Մասիսի հողեն, Երասխի ջուրեն և Հայաստանի ծաղիկներեն քիչ մը վերցնեն և փոքրիկ արկղով մը ղրկեն Վենետիկ»: Ավաղ, սակայն, այն ուշ տեղ հասավ և ցողվեց Հայր Ալիշանի թարմ հողաթմբին:

Սիրելի Մխիթարյան հայրեր, Մենք՝ Հայրապետ Հայոց, հոբելյանական այս օրերին Մեր ազգային գիտության այս բարձր ամբիոնից Հայոց Հայրիկի հարազատ ոգով գալիս ենք ջերմորեն ողջունելու և Հայրապետական Մեր օրհնությունը բերելու Ձեզ ու Մխիթարյան ուխտի ողջ միաբանությանը: Այսօր, գոհություն և փառք Աստծո, Դուք ներկայացնում եք միացյալ արբայություն, ինչպիսին այն ստեղծվեց 300 տարիներ առաջ: Մեր հայցն ու մաղթանքն է, որ միության ոգին սավառնի ինչպես մեր ներքին եկեղեցական, այնպես և համայն ազգային կյանքից ներս, որպեսզի կարողանանք 1700-ամյա երազները մեր սուրբ նախնյաց կյանքի կոչել ի բարօրություն ազգիս հայոց: Աղոթքով առ Աստված հայցում ենք, որ Տերը առաջնորդի Մխիթարյան միաբանության հոգևոր առաքելությունը, աջակից լինի նրա անդամներին հավատով, ծառայասիրության ու ջանադրության զորավոր ոգով շարունակելու միաբանության 300-ամյա ավանդները:

Մխիթարյան միաբանության 300-ամյակին նվիրված գիտաժողովի բացման առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունն ենք բերում նաև նրա կազմակերպիչներին ու բոլոր մասնակիցներին և աղոթքով առ Աստված մաղթում հաջողություններ՝ հանուն անցյալի մեր ժառանգության արժևորման, հանուն հայոց գիտության այսօրվա ու գալիքի:

Շնորք, սեր և խաղաղություն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ և ամենեսեան, ամեն:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
Ծայրագույն Պատրիարք և
Ամենայն Հայոց Կաթողիկոս

ՀՀ ԳԱԱ ՊՐԵԶԻԴԵՆՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Հայրապետ,
Գիտաժողովի հարգելի արտասահմանյան հյուրեր և հայրենի մասնակիցներ,
Հարգարժան տիկնայք և պարոնայք,

Թույլ տվեք բաց անել մեր ժողովրդի համար հույժ նշանակալից այս իրադարձության, մեր բոլորիս սրտին և մտքին թանկ՝ Մխիթարյան միաբանության 300-ամյա հոբելյանին նվիրված գիտաժողովը:

Իրոք, մեծ է Մխիթարյանների դերը հայ հոգևոր-մշակութային վերածննդի գործում, հարյուրամյակներով չափվող վաստակ, որ կենսական լիցք է տվել մեր ժողովրդին երեք դար շարունակ և որը բևեռվել է այսօրվա մեր գիտաժողովում, որպես խորագիր:

Հիրավի, միայն ազգային վերածննդի համընդհանուր մղումներն ու ընթացքը կարող էին ի հայտ բերել խոշորագույն լուսավորչին, հոգևորականին, հասարակական, գիտական ու մշակութային այնպիսի գործչին, ինչպիսին Մխիթար Սեբաստացին էր: XVII–XVIII դդ. հայ ժողովրդի հատվածայնորեն տարանջատ վիճակը, օտար բարքերի և մտածողության ներթափանցումը հայության մեջ, սեփական արժեքների լճացման վտանգը, կրոնադավանական անպտուղ հակասությունները և այլ իրողությունները սպառնում էին ազգի մշակութային-հոգևոր ինքնությանը: Մեր ժողովրդի ներուժը դրան էր հակադրել ազգային-լուսավորական շարժումը, որի նվիրյալ հիմնադիրներից մեկը եղավ Մխիթար Սեբաստացին: Այս շարժման մեջ Մխիթարին վիճակված էր բացառիկ առաքելություն՝ ծավալել ուսումնակրթական, հոգևոր ու գիտական բեղմնավոր գործունեություն, որն իրականացնելու համար նա սկիզբ դրեց իր իսկ անունը կրող միաբանությանը:

Մխիթար Սեբաստացու և նրա միաբանության մեծագործությունը բնութագրող կողմերից ամենանշանակալին, թերևս, այն է, որ հայրենիքից դուրս և նրանից հեռու նրանք ի զորու եղան ստեղծել հոգևոր հայրենիք

և իրենց հավատի ուժով մեր ժողովրդի բազմաթիվ սերունդների ներշնչեցին նրա գոյատևման հաստատուն երաշխիքները իմացության լույսը և իր մնայուն արժեքների գիտակցությունը:

Միաբանությունը մեկընդմիշտ հաստատվեց հյուրընկալ Իտալիայի ափերին, Վենետիկի սուրբ Ղազար կղզում, այստեղ էլ ծավալեց իր ազգանվեր գործունեությունը. Ինքը՝ Մխիթար Սեբաստացին, հանդես եկավ իր բեղմնավոր մանկավարժական ու գիտական գործունեությամբ: Հայագիտության մեջ նրա խոշոր ներդրումն է «Բառգիրք Հայկազյան լեզվի» երկհատոր աշխատությունը, որով և սկիզբ դրվեց մխիթարյան դպրոցի գիտական գործունեության հարյուրամյակներ հարատևող արժեքներին:

XVIII դարում և հաջորդ ժամանակաշրջանում Վենետիկի, ինչպես և Վիեննայի Մխիթարյանները աննախընթաց բարձրության հասցրեցին հայ պատմագրությունն ու բանասիրությունը, մշակույթը, բնագիտությունն ու դրատպությունը: Հայագիտության մեջ խոր հետք են թողել Գ. Ավետիքյանի, Մ. Զամչյանի, Մ. Ավգերյանի, Ղ. Ինճիճյանի, Ղ. Ալիշանի, Գ. Զարբհանալյանի, Ա. Գարագաշյանի, Գ. Մենեվիշյանի, Գ. Գովրիկյանի, Գր. Գալեմքարյանի, Ա. Այտընյանի, Հ. Տաշյանի և այլոց երկերը: Ակնառու գեր կատարեցին Մխիթարյանները հայ դպրոցի, թատրոնի և արևմտահայ գրական աշխարհաբարի, մշակույթի այլևայլ ճյուղերի զարգացման ասպարեզում:

Հայագիտության արդի զարգացման պայմաններում այսօր ևս Մխիթարյանները շարունակում են այն վսեմ գործը, որին կոչված են՝ լուրջ հեղինակություններով նպաստել հայագիտության առաջընթացին: Թույլ տվեք ի սրտե շնորհավորել միաբանությանը նրա հիմնադրման 300-ամյակի, հայագիտության և գիտության մեջ նրա ազգանվեր ու արդասաբեր գործունեության համար:

Բարի երթ ու ամենայն հաջողություն եմ մաղթում գիտաժողովի հարգարժան մասնակիցներին և բոլոր ունկնդիրներին:

ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԲԲԱՀԱՅՐ Հ. ԵՂԻԱ ՎՐԴ. ՔԻԼԱՂՊՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տէր,
Հայաստանի Հանրապետության Նախագահի Ներկայացուցիչ,
Ակադեմիայի պատասխանատու մարմին,
Հարգելի ակադեմիականներ,
Սիրելի հյուրեր

Այս հոբելյանը հրաշալիորեն կզուգադիպի Հայոց Քրիստոնեության 1700-ամյակին. արդարև ճիշտ 1700-ին Մխիթար վարդապետ Սեբաս-

տացին հիմը դրավ իր միաբանության ի ծառայություն կրոնի և Հայրենյաց:

Իսկապես հավատքը և գիտության սերը հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ զուգահեռ ընթացած են և իրարու զորավիգ կանգնած:

Արդեն իսկ չորրորդ դարեն հայ մշակույթը ճառագայթեց վանական կեդրոններեն և անդրանիկ գլուխգործոցները ծնունդ առին այս հավատքեն:

Հայոց վանքերու մեջ հավատք և մշակույթ իրարմե անբաժանելի իրականություններ են. Մխիթարյան միաբանությունը այս հոդին ժառանգելով հավատարիմ մնաց այս ավանդության, իր մեծ նվիրումով կենդանացնելու մշակութային մեծ ավանդույթը:

Մխիթար վարդապետ Սեբաստացի մասնահատուկ առաքելություն և ճակատագիր ուներ – փրկել իր ժողովրդի ինքնությունը խոր հավատքի և գիտության ճամփով:

Մխիթար խորապես գիտակցեցավ իր ժողովրդի ծանր իրավիճակին ու ծրագրեց իմաստ մը տալ ամեն հայու առանձնաբար, որպեսզի կարելի ըլլար հասնիլ բոլորին:

Հայու իրականության մեջ վտանգված էր ամեն ինչ հողը, ազգությունը, օրենքները: Կարելի էր փոխարինել միմիայն հասուն հավատքով և գիտակցությամբ դեպի իր պատմությունը և մշակույթը. միայն այս ճամփով հայը կրնար ճանչնալ ինքզինքը և չվախնալ ուրիշներեն և պաշտպանել իր ինքնությունը: Այս ազգային ինքնագիտակցության վերարժևորումը պետք է ծառայե լավագույն կերպով ապրելու ներկան, լուսավոր հայացքով նայիլ ապագային և առանց վախնալու բացվիլ մյուս մշակույթներուն: Մխիթարի հղացած ծրագիրը նախ որդեգրվեցավ իր Միաբանության, ապա ընդունվեցավ և գործադրվեցավ ողջ հայության կողմե:

Այն առաքելությունը, որ Միաբանությունը 300 տարիներու ընթացքին իրականացուց աշխարհի չորս ծագերուն ցրված հայ ժողովրդի մեջ, այսօր նոր ուղի մը կը գտնե իր անկախությունը վերագտած Մայր Հայրենիքին մեջ: Վերարծարծելով իր պատմական հիշողությունը և վերակենդանացնելով իր արմատները, Մխիթարյան միաբանությունը կնայի Հայրենիքին, որպես իր ներշնչումի աղբյուրին. պանդխտությունը, որ անցյալին Մխիթար Սեբաստացին ապրեցավ իր հալածյալ ժողովուրդին հետ միասին, այսօր արդեն վերածված է հայրենի ժողովրդի մեջ գործելու կենսակերպի մը:

Զորակցությունը և հասկացողությունը, որ հայրենի կառավարությունը կը շարունակե ցուցաբերել, կը պատվե այս միաբանությունը, կը հզորացնե իր գործունեությունը և հույսով լի կնայի ապագային:

Սրտանց շնորհակալություն կուզեի հայտնել՝

Ամենայն Հայոց Հայրապետ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ կաթողիկոսին իր հայրական ներկայության և զորակցության համար.

Հայաստանի Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ պրն. Ռ. Դավոյանին,

Ակադեմիայի նախագահ Ցադեյ Սարգսյանին,

և բոլոր այն պետական և գիտական մարմիններուն, որոնք կազմակերպեցին միաբանությանս հոբելյանական տոնակատարությունները.

– Ազգային գրադարանի մեջ՝ Մխիթարյան միաբանության հրատարակչական ցուցահանդեսով,

– Գիտություններու Ազգային Ակադեմիայի մեջ եռօրյա նստաշրջանով,

– Ազգային պատկերասրահին մեջ՝ նկարչական ցուցահանդեսով,

– և հուսկ՝ Ազգային օպերայի մեջ համերգով՝ մխիթարյան սան Հովհաննես Զեքիջյանի ղեկավարությամբ:

Մասնահատուկ շնորհակալություն կուզեի հայտնել բոլոր այն ուսումնասերներուն, որոնք այս օրերուն իրենց զեկուցումներով անդամ մը ևս փառապանծ պսակը պիտի հյուսեն Մխիթար Սեբաստացիի, որ գիտցավ Ավետարանի խոսքը գործադրել և մեռնիլ ցորենի հատիկին պես, որպեսզի բյուրապատիկ պտուղներ պարգևե իր սիրեցյալ հայ ժողովուրդին:

Այսօր Մխիթարի միաբանությունը իր երկու ճյուղերու միավորումով կը շարունակե ընթանալ իր հիմնադրի՝ Մխիթար վարդապետ Սեբասացիի բացած ուղիով, ի նպաստ իր ժողովուրդի հոգևոր լուսավորության:

Հ. ԵՂԻԱ ՎՐԴ. ՔԻԼԱՂՊՅԱՆ
Մխիթարյան միաբանության աբբահայր